

ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐՈՂՆ ՈՒ ՄԵԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ

(Մ. Գորկու ծննդյան 100-ամյակի առթիվ)

Հ. Մ. ՄՆԱՑԱԿՈՆՏԱՆ

Սոցիալիստական ռեալիզմի գրականության հիմնադիր Մաքսիմ Գորկին (Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկովը) ծնվել է 1868 թ. մարտի 16-ին (28-ին) Նիժնի Նովգորոդում (այժմ Գորկի), ատաղձագործի ընտանիքում:

Բացառիկ ծանր մանկություն է ապրել Մ. Գորկին: Զորսամյա Ալեքսեյը ղրկվում է հորից, իսկ տասը տարեկան հասակում՝ նաև մորից և ապրում է պապի՝ Ներկատան տեր Վ. Կաշիրինի ընտանիքում: Մանկության օրերի միակ սփոփանքը ժողովրդական հարուստ լեզվի ու բանահյուսության քաջատեղյակ, մարդկային լավագույն գծերով օժտված բարի տատիկն էր՝ Ակուլինա Իվանովնան:

Տղայի դրությունը դաժան բնավորության տեր, բռնակալ ծերունի Կաշիրինի տանը առավել ծանրացավ, երբ վերջինս սնանկացավ: Տասնմեկամյա Ալեքսեյը ստիպված էր իր մի կտոր հացը ինքը վաստակելու «Մառայության



մեջ» ինքնակենսագրական վեպում Մ. Գորկին պատմում է իր այդ տարիների բազմաթիվ թափառումների մասին. նա մեկ աման լվացող է շոգենավի վրա, մեկ հնթավարպետ՝ սրբապատկերների նկարչատանը, մեկ համր դերասան թատրոնում: Սակայն այդ բոլորը չի խանգարում նրան ինքնակրթությամբ, տակավին երիտասարդ հասակում, մոտիկից ծանոթանալ ռուս և արտասահմանյան բազմաթիվ մեծ գրողների ստեղծագործություններին, հարստացնել իր գիտելիքները մարդկության մտքի լավագույն նվաճումներով:

Համալսարանական կրթություն ստանալու ձարավր Մ. Գորկուն 1884 թ. բերում է Կաղան: Սակայն բարձրագույն կրթություն ստանալու նրա հույսերը չեն իրականանում. նրան համալսարան չեն ընդունում: Կաղանում Գորկին ծանոթանում է «հատակի» մարդկանց կյանքին, մերձենում հեղափոխական մարքսիզմի ներկայացուցիչներին: Իր կյանքի այդ շրջանը Մ. Գորկին պատկերել

է ինքնակենսադրական մեկ այլ՝ «Ժմ համալսարանները» երկում: Ծանոթութիւնը հեղափոխական միջավայրի, հատկապէս ռուսական հեղափոխական մարքսիզմի առաջին ներկայացուցիչներից մեկի՝ Ն. Ի. Ֆեդոսենի հետ կարեւոր դրական նշանակութիւն ունեցաւ ապագա գրողի կյանքում:

Զորս տարի Կաղանում մնալուց հետո Մ. Գորկին վերադառնում է Նիժնի Նովգորոդ: Այստեղ նա ծանոթանում է Վ. Գ. Կորոլենկոյի հետ և նրա դատին հանձնում իր առաջին գրական փորձը՝ «Հին կաղնու երգը» պոեմը, որն արժանանում է Կորոլենկոյի խստագույն քննադատութեանը:

Ռուսաստանը ճանաչելու, ժողովրդի կյանքը տեսնելու ցանկութիւնը Մ. Գորկուն ստիպում է ոտքով կտրել-անցնել կենտրոնական Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդավիան, Ղրիմը: 1891 թ. աշնանը նա հասնում է Թիֆլիս: Այստեղ Մ. Գորկին ծանոթանում է նարոդովոյցի քաղաքական արևոքայալ Ալեքսեյ Մեֆոդիևի: Կալյուժնու հետ: Այս ծանոթութիւնը գրողի կյանքում ունեցաւ վճռական նշանակութիւն:

Մոտ մեկ տարի Թիֆլիսի երկաթուղային բանվորների շրջանում աշխատելուց հետո, 1892 թ. սեպտեմբերի 12-ին տեղական «Կավկազ» թերթում Ա. Մ. Կալյուժնու դրդմամբ տպագրւում է Ալեքսեյ Պեչկովի առաջին ստեղծագործութիւնը՝ «Մական Զուգրան», «Մաքսիմ Գորկի» ստորագրութեամբ:

Նույն թվականի աշնանը Մ. Գորկին վերադառնում է հայրենի Նիժնի Նովգորոդ, իր հետ տանելով առաջին տպագիր ստեղծագործութիւնը և բազմաթիւ մտահղացումներ:

Նիժնիում Գորկին ղեկավարում է գրական աշխատանքով, տպագրւում մեծ մասամբ Պովոլոժիեի թերթերում («Վոլոժսկի վեստնիկ», «Վոլգար», «Սամարսկայա գաղետա»)։ Իր հոգիւածներում և ֆելիետոններում նա արծարծում էր քաղաքական խնդիրներ, մերկացնում «քաղաքի տերերին», պաշտպանում բանվորների, գյուղացիների շահերը, գրում ռուս ղեմակրատների, հայրենասիրութեան և այլ հարցերի մասին:

1895 թ. Կորոլենկոն Գորկուն հրաւիրում է Սամարա և օգնում նրան պետերբուրգյան «Ռուսակոյե բոգատստովո» ամսագրում տպագրելու «Զեկաշը»։ Սա Գորկու առաջին ելույթն էր կենտրոնական մամուլում:

1898 թ. Պետերբուրգում լույս է տեսնում Գորկու ականակների ու պատմւածքների երկհատորյակը, որը միանգամից հայտնի դարձրեց հեղինակի անունը ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Գորկու երկհատորյակը գրավեց նաև Լ. Տոլստոյի ու Ա. Չեխովի ուշադրութիւնը: Այդ պատմւածքներն ու ականակները աշխատավոր լայն մասսաների մեջ մեծ հետաքրքրութեան առաջ բերին. բնթերցողները հանձին Գորկու տեսան իրենց արվեստագետին, որն արտահայտում էր ժողովրդի սպասումները, նրա բողոքը:

Առաջին իսկ քայլերից Գորկին ամբողջ ուժով դեմ ելաւ մարդուն ալլանդակող անիրաւ հասարակարդի դեմ, երադեց հերոսականի մասին, որոնեց ու դատւ մարդու մեջ այն բոլոր լաւը, գեղեցիկն ու վեհը, որն ալլանդակւում էր, ձգմւում ու ոչնչացւում տիրող հասարակարդի կողմից: Գորկու այս շրջանի գործերը լի էին սոցիալիստական սեւիզմի ուղիների որոնումներով:

«Երբ մարդը սխրագործութիւններ է սիրում, միշտ էլ կարողանում է դրանք կատարել ու դրա համար տեղ կգտնի: Կյանքում, դիտելու, միշտ էլ տեղ կա սխրագործութիւնների համար: Այն մարդիկ չեն դառնում այդ տեղը, որոնք

սոսկ ծուլիւր կամ վախկոտներ են, կամ չեն հասկանում կյանքը, որովհետեւ եթէ մարդիկ հասկանային կյանքը, ամեն մեկը կուզենար իր մահից հետո հիշատակ թողնել կյանքում», — ասում է պառավ Իլերգիլը, համանուն պատմըվածքի հերոսը: Հակադրելով պատմըվածքի երկու լեզենդների հերոսներին՝ Եսասեր, անհատապաշտ Լարային և մարդկանց լուսավոր ճանապարհի հանելու պատրաստ պատանի Դանկոյին, Գորկին գովերգում էր ազատութեան ջատագովներին, ժողովրդի ազատագրման գործի համար իրենց կյանքը զոհելու պատրաստ հերոսներին: Լարան արհամարհում է մարդկանց, իրեն բոլորից բարձր է դասում, որի համար էլ մարդիկ որոշում են նրան մենակութեան դատապարտել, ինչպէս արեւը և արեւից էլ պայծառ, ամբողջ անտառը լոնց մարդկանց նկատմամբ մեծ սիրո այդ ջահով լուսավորված, իսկ իսկարը նրա լույսից ցնդեց»:

Մ. Գորկու այդ շրջանի ողմանտիկական ստեղծագործություններում կարեւոր տեղ են գրավում «Բազեի երգը», «Մրրկահավի երգը» գործերը: Սրանք ոչ միայն ողմանտիկական ստեղծագործություններ էին, այլև հեղինակի հեղափոխական տրամադրությունների ցայտուն մարմնավորում: «Խոլ խիզախների խենթութեանը վեհ երգում ենք փառք մենք», — «Բազեի երգի» վերջաբանը հնչում էր որպէս աճող հեղափոխական տրամադրությունների ու աշխարհայացքի վառ արտահայտություն: Այս տրամադրություններն ավելի ցայտուն և որոշակի մարմնավորվեցին «Մրրկահավի երգում»: Երգը հասարակական մեծ արձագանք գտավ Ռուսաստանում և արտասահմանում, թարգմանվեց բազմաթիվ լեզուներով ու տարածվեց որպէս կոչ մասսաների լայն շրջաններում: «Մրրկահավի երգը», Ավ. Իսահակյանի թարգմանությամբ, այդ թվականներին տպագրվեց նաև արտասահմանյան հայ մամուլում և մեծ ընդունելություն գտավ:

Վ. Ի. Լենինը չափազանց բարձր գնահատեց «Մրրկահավի երգը» և իր աշխատություններում ու ելույթներում օգտագործում էր այն, մեջբերումներ կատարում նրանից: Այսպէս, 1906 թ. «Փոթորկից առաջ» հոդվածում նա գրում էր. «Պրոլետարիատը պատրաստվում է պայքարի, համերաշխ ու առույգ ընդառաջ է գնում փոթորկին, նետվում ճակատամարտի ամենաեռուն տեղը: Բավական է երկշոտ կաղետների գերիշխանությունը, այդ «տխմար պինգվինների», որոնք «վախկոտությամբ իրենց պարարտ մարմինը թաքցնում են ժայռերի մեջ: Թող ավելի ուժգին պայթի փոթորիկը»¹:

90-ական թթ. ողմանտիկական բազմաթիվ գործերի կողքին Մ. Գորկին ստեղծեց «Զելկաշը», «Եմելյան Պիլյայը», «Արխիպ պապն ու Լյոնկան», «Նախկին մարդիկ», «Մալվա», «Կոնովալով», «Օրլով ամուսինները» և բազմաթիվ այլ պատմըվածքներ, որոնց մեջ նա ռեալիստական լայն ընդհանրացումներով պատկերում էր կապարե ծանրությամբ մարդկանց վրա իջած կյանքի անարդարությունները և ըմբոստությունն ու բողոքը դրանց դեմ: Այդ պատմըվածքների հերոսներից շատերը կյանքի դառնություններով լի իրականությանը հա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ. 161:

կադրվում էին իրենց մարդկային լավ դժերով, աշխատանքի մարդու պարզ ու հասարակ, բայց միևնույն ժամանակ վեհ ձգտումներով ու խոհերով:

Ն. Գորկին այդ պատմվածքներում որոշակիորեն ցույց էր տալիս մարդուն երբեք չափանոց հասարակության դեմքը և վեր հանում այն անձանց կերպարները, հոգու վեհությունը, որոնք սնվում էին աշխատավոր միջավայրի ստեղծած զաղափարներով ու ձգտումներով: Կապիտալիզմի զարգացման հետ առնչվող հակասությունների ներքին բովանդակության բացահայտումը տևում են Գորկու «Ֆոմա Գորդեև» վեպում (1899 թ.) և «Երեքը» (1900 թ.) վիպակում: Դրանցից առաջինի հիմքում այն միտքն է ընկած, որ ռուսական բուրժուազիայի առերես գործունյա թվացող էությունը լի է ներքին լուրջ հակասություններով և այդ հակասությունները ճնշում, սեղմում են այդ միջավայրի ծնունդ այն մարդկանց, որոնք դեռ չեն կորցրել իրենց առողջ հոգին: Պատմական լայն ֆոնի վրա Մ. Գորկին ռեալիստական արվեստի մեծ ուժով պատկերում է իրենց իսկ կեցությամբ անհեռանկար գոյության դատապարտված, անխուսափելի կործանման ճանապարհին կանգնած մարդկային կերպարների մի ամբողջ շարան: Ե՛վ «Ֆոմա Գորդեև» վեպում, և՛ «Երեքը» վիպակում պատկերված են ռուսական բուրժուազիայի տիպական կերպարները, նրանց ձևավորումը: Ի դեմս վաճառականության զաղափարախոս և ղեկավար Յակով Մայակինի («Ֆոմա Գորդեև») Գորկին մերկացնում է իր տնտեսական ուժը գիտակցող և քաղաքական իշխանության ձգտող բուրժուազիային, որը միևնույն ժամանակ երազում էր բուրժուական միապետության մասին, իսկ հանձին Ֆոմա Գորդեևի՝ բուրժուական հասարակությունը լքողի կերպարը, ցույց է տալիս, թե ինչպես նա, պոկվելով իր դասակարգից, մնացել է սոսկ միայնակ-խռովարար և անուժ է այդ նույն բուրժուական հասարակության դեմ պայքարելու:

Մ. Գորկին առաջին անգամ այս վեպում աշխատավորների ընդհանուր դանդաղ ջոկեց, առանձնացրեց պրոլետարիատին, որը պատրաստվում էր պատմության իսկական հերոսը դառնալ, չինել նոր աշխարհի կառուցողը:

«Երեքը» վիպակում պատկերված է քաղաքի ընչազուրկների աշխարհը, ուր բախման մեջ են մտնում մանր-բուրժուական և պրոլետարական միտումները: Ժողովրդի խավից դուրս եկած Իլյա Լուենը ձգտում է «մարդ դառնալ» և այդ նպատակով ոտք է դնում սեփականատիրոջ, դրամ կուտակողի ուղին: Հետագայում, գիտակցելով դրա ողջ կեղծությունը, նա ինքնասպանություն է գործում: Լուենին հակադրված է Պավել Գրաչևը, որը կյանքում գտնում է իր ճանապարհը, մերձենալով սոցիալիստական խմբակներին:

Ինչպես «Ֆոմա Գորդեևում», այնպես էլ «Երեքում» արծարծված բաղամթիվ խնդիրներ Գորկու համար մի տեսակ ծրագրային հարցեր են դառնում: Այդ գործերի շատ հերոսների կերպարները Գորկու հետագա ստեղծագործություններում զարգանում, կոնկրետանում և նոր երանգավորում են ստանում: Այսպես, «Երեքի» հերոս Պավել Գրաչևը, որ վերջում մերձենում է սոցիալ-դեմոկրատներին ու աշխատանքի անցնում գործարանում, հետագայում մեքենավար Նիլի («Քաղթնիներ»), իսկ ավելի ուշ՝ Պավել Վլասովի («Մայրը») կերպարների նախատիպն է հանդիսանում:

XX դարի սկզբին Ռուսաստանում հեղափոխական իրադրությունը արագորեն հասունանում էր: Գորկին ոչ միայն իր ստեղծագործություններով, այլև հասարակական կյանքին ակտիվ մասնակցությամբ հաղորդակից է դառնում պատմական այդ իրադարձություններին:

Հեղափոխական վերելքի այդ տարիներին Մ. Գորկին դիմում է նաև դրամատուրգիային և մեկը մյուսի ետևից ստեղծում պիեսներ, որոնք ներծծված էին սոցիալ-քաղաքական թեմաներով: Հեղինակը այդ պիեսներում վճռական պայքար է մղում բուրժուական գաղափարախոսության դեմ, դրան հակադրելով պրոլետարական աշխարհայացքը, վեր հանում տիրող հասարակարգի արատավոր կողմերը, գովերգում աշխատավոր մարդու հոգու վեհությունը: Այդ բանը հատկապես պարզորոշ արտահայտվեց «Քաղքենիներ» (1901 թ.) պիեսում, որտեղ Գորկին մերկացնում էր ոչ միայն քաղքենիական աշխարհի հետադիմական, նահապետական ու պահպանողական «հայրերին», այլև լիբերալություն խաղացող «լուսավորված» «զավակներին»: Պիեսում մերկացվում էին նաև այդ «մեկ ժամով քաղաքացիների» օպոդիցիան ու կապիտուլյացիան, բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև եղած կոնֆլիկտի «երրորդ ուժը» դառնալու նրանց ողորմելի ջանքերը:

Մ. Գորկու, որպես դրամատուրգի, նորարարությունը հատկապես ցայտուն երևաց նիլի կերպարը ստեղծելիս: Նիլը բոլշևիկյան տիպի հեղափոխական բանվորի առաջին կերպարն էր ռուսական և համաշխարհային գրականության մեջ: Նիլը ռուս բանվորի տիպական բնավորությունն է, կյանքը վերափոխողի ու պատմության իսկական հերոսի նոր կերպար: Պրոլետարական ավանգարդի ձգտումները, զգացմունքները նրան անսահման բարձր են դասում այն միջավայրի համեմատությամբ, որով նա շրջապատված է բեսսեմենովների տանը: Նիլը անկեղծորեն հավատում է, որ կապիտալիստական կարգերը կործանվելու են, և աշխատավոր ժողովուրդը դառնալու է կյանքի տերը, և գիտակցում է, որ այդ հաղթանակը ինքնին չի գալու, այն պետք է նվաճել. «Բրավունքը չեն տալիս, իրավունքը ձեռք են բերում»... — ասում է նա: «Քաղքենիներ» պիեսում առաջին անգամ պարզորոշ կերպով ուրվագծվեցին սոցիալիստական ռեալիզմի դրամատուրգիայի սկզբունքները:

Մ. Գորկու հաջորդ՝ «Հատակում» պիեսը հսկայական տպավորություն գործեց ոչ միայն Ռուսաստանում, այլև Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում: Գեղարվեստական պատկերման մեծագույն վարպետությամբ և կյանքի այլանդակող կողմերի քննադատական մերկացմամբ ցույց էր տրվում կյանքի «հատակը» նետված մարդկանց ներքին աշխարհը. նրանց աակատագրում հեղինակը տեսնում էր կապիտալիզմի մեծագույն հանցագործության վկայությունը: Պիեսի հերոսներից մեկի՝ Սատինի խոսքերը՝ «Մա՛րդ... դա հպարտ է հնչում», ավետում էին մարդու նկատմամբ առաջադրվող նոր վերաբերմունքի դարաշրջանը:

Մ. Գորկին ցույց տվեց, սակայն, որ Սատինը և նրա նմանները ոչինչ չեն կարող անել այդ իդեալների իրականացման համար, որ նրանք խոսքից այն կողմ գնալ չեն կարող: Ակտիվ հումանիզմի գաղափարները Գորկին զարգացնում է քիչ ուշ, «Մարդը» փիլիսոփայական գրվածքում (1903 թ.), որը ներծրծված էր մարդու հանդեպ ունեցած խոր հավատով:

Հեղափոխական վերելքի տարիներին (1904—1905 թթ.) Գորկին ստեղծում է մի շարք պիեսներ՝ «Հովեկներ» (1904 թ.), «Արևի զավակները» (1905 թ.), «Բարբարոսներ» (1905 թ.), որոնցից առաջինում դավաճան լիբերալներին հակադրված է դեմոկրատական մտավորականությունը, երկրորդում մերկացվում է բուրժուական հասարակարգում «ազատ գիտություն» ստեղծելու կեղծիքը և կոչ է արվում գիտությունը ծառայեցնել ժողովրդին, իսկ երրորդում

Գորկին զարգացնում էր այն միտքը, թե հետամնաց Ռուսաստանին իսկական վերափոխություն կրերի ոչ թե կապիտալիստական տեխնիկան, այլ միայն հեղափոխական պայքարի միջոցով իրականացվող սոցիալական ազատագրումը: 1905 թ. աշնանը կայացավ Մ. Գորկու և Վ. Ի. Լենինի առաջին հանդիպումը:

Հսկայական ու անդնահատելի ծառայություն մատուցեց Գորկին 1905 թ. հեղափոխության ժամանակ: Նա գրում է թոուցիկներ, հանդես գալիս հողվածներով: Նրա մոսկովյան բնակարանը վեր է ածվում շտաբի: Նա զենքով ու դրամական միջոցներով օգնում է հեղափոխականներին:

Ցարական կառավարությունը Գորկուն բանտարկում է Պետրոպոլիովյան ամրոցում. սակայն Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հասարակական լայն շրջանների ճնշման ներքո ստիպված է լինում ազատել նրան բանտից: Մոսկովյան ապստամբությանը մասնակցելու համար Գորկուն սպառնում էր նոր դատ, և նա կուսակցության որոշմամբ մեկնում է արտասահման (Ֆինլանդիա, Շվեդիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլա՝ Ամերիկա):

Եվրոպայում և Ամերիկայում Մ. Գորկին հանդես է գալիս ռուսական ցարիզմը մերկացնող ելույթներով: Ամերիկայում նա 1906 թ. գրում է իր հայտնի «Պամֆլետները», «Իմ հարցազրույցները» և «Ամերիկա» խորագրով ակնարկաշարը: Մերկացնելով կապիտալիստական «ազատ» աշխարհի էությունը, Գորկին իր այդ գործերում ցույց էր տալիս հասարակ աշխատավորների անտանելի կյանքը «դեղին սատանայի» հայրենիքում:

1906 թ. Մ. Գորկին գրում է «Թշնամիներ» սլեսը, որտեղ պրոլետարիատը պատկերված է որպես աճող, օր-օրի ամրացող մի ուժ: Չնայած պիեսի վերջում ոստիկանական պետության խավար ուժերը տանում են հաղթանակը, սակայն հեղինակը պարզորոշ կերպով ընդգծում է հեղափոխական պրոլետարիատի ապագա հաղթանակի հեռանկարները: Նույն թվականին Ամերիկայում Մ. Գորկին գրում է «Մայրը» վեպը, որը հղացել էր դեռևս 1902 թ.: Վեպի համար նյութ են ծառայել Սորմովոյի (Նիժնիի բանվորական արվարձանը) մայիսմեկյան հայտնի ցույցի դեպքերը և նրա մասնակիցների դատը: Գրողը կարողացել է դուրս գալ մասնակի դեպքերի շրջանակներից, ընդհանրացնել դրանք և պատկերել որպես պրոլետարիատի 90-ական թթ. վերջի և 900-ական թթ. սկզբի դասակարգային պայքարի մի ամբողջ համայնապատկեր: Վեպում առաջին անգամ ոչ միայն ռուս, այլև համաշխարհային գրականության մեջ ռեալիստորեն պատկերված է հեղափոխական պրոլետարիատի դասակարգային պայքարը հանուն սոցիալիզմի հաղթանակի: Դրանով էլ հենց ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանը վերադառնում է համաշխարհային պատմական նշանակություն, դառնում համամարդկային մի երևույթ:

Մ. Գորկին չի սահմանափակվում երևույթների ու մարդկանց ստատիկ նկարագրությամբ: Մենք տեսնում ենք, թե ինչպես են աճում ու հասունանում հեղափոխական դեպքերը ու նրանց հետ միասին՝ մարդկային բնավորությունները: Բանվորական ավանի առօրյայի դանդաղաշարժ նկարագրությամբ է սկսվում վեպը: Գորկին ցույց է տալիս, թե ինչպես այդ ծանր, կապարե կյանքի ճնշում է մարդկանց, դարձնում նրանց անտարբեր դեպի շրջապատը, ներշնչում նրանց, որ այդպես եղել է, այդպես էլ կլինի: Սակայն վեպում հաջորդաբար նկարագրվում են պրոլետարական շարժման վերելքի դրվագները. բանվոր դասակարգի ավանդարդի ներկայացուցիչներ Պավել Վլասովը, Անդրեյ Նախոդկայն և սրանց ընկերները համախմբվում են բանվորական սոցիալ-

դեմոկրատական խմբակներում, ընթերցում «արգելված» գրքեր, վիճաբանում կյանքի հարցերի շուրջը և անլեզալ գրականության տարածումից անցնում բաց ելույթների, առաջադրում տնտեսական, քաղաքական պահանջներ, կազմակերպում մայիսմեկյան ցույցեր:

«Մայրը» վեպի ամենակարևոր արժանիքներից մեկը հեղափոխական պայքարում ծնվող նոր մարդու կերպարի պատկերումն է, նրա գիտակցության աճը: Այդ բանը հատկապես ցայտուն կերպով արտահայտվեց նիլովնայի՝ երբեմնի խավար, կյանքի կողմից անթիվ հարվածներ ստացած հլու կնոջ կերպարում, որը աճեց մինչև հայրենիքի, մարդկային երջանկության համար պայքարելու պատրաստ պրոլետարական գիտակից ու բոցաշունչ մարտիկի աստիճանը:

1907 թ. մայիսին լոնդոնում կուսակցության V համագումարում Մ. Գորկին կրկին հանդիպում է Վ. Ի. Լենինի հետ: Լենինը, որ «Մայրը» վեպը կարդացել էր ձեռագիր վիճակում, Գորկու հետ ունեցած դրույցի ժամանակ նշում է գրքի կարևորությունը, ասելով. «...գիրքը պետքական է, շատ բանվորներ մասնակցում էին հեղափոխական շարժմանը անգիտակցաբար, տարերայնորեն և այժմ նրանք իրենց համար մեծ օգուտով կկարդան «Մայրը»: «Ճիշտ ժամանակին գրված գիրք է», — եզրափակում է Լենինը:

«Մայրը» վեպը շուտով դարձավ համաշխարհային պրոլետարիատի սեղանի գիրքը:

Վտարանդի Մ. Գորկին չէր կարողանում վերադառնալ հայրենիք. նրան Սիբիր էր սպառնում, և նա ստիպված էր 1906—1913 թթ. ապրել Իտալիայում՝ Կապրի կղզում: Այդ ժամանակին են վերաբերում Մ. Գորկու սխալները կապված աստվածորոնման հետ: Վ. Ի. Լենինը, ինչպես միշտ, այս անգամ էլ օգնում է Գորկուն դուրս գալու այդ մոլորությունից: Քննադատելով Գորկու սխալները, նա միևնույն ժամանակ բարձր էր գնահատում Գորկի-արվեստագետին, ընդգծում, որ «Գորկին խոշորագույն ներկայացուցիչն է պրոլետարական արվեստի, նրա համար շատ բան է արել և էլ ավելի շատ բան կարող է անել»²:

Այդ տարիներին Գորկին ստեղծում է գավառային Ռուսաստանի մանրրորժուական, քաղքենիական աշխարհը, նրա՝ հին կարգերի նեցուկը հանգիսացող քաղքենիական «փիլիսոփայության» հիմքերը մերկացնող մի շարք գործեր՝ «Օկուրով քաղաքիկը» (1909 թ.), «Մատվեյ Կոժեմյակինի կյանքը» (1910—1911 թթ.) և այլն: Այդ երկերում Գորկին ներկայացնում է քաղքենիական միջավայրի փտած պատկերը, ցույց տալիս այդ միջավայրի դերը հեղափոխության ժամանակավոր պարտության պորժում:

1913 թ. Լենինի խորհրդով Գորկին, օգտվելով ռոմանովների թագավորության երեքհարյուրամյակի կապակցությամբ հայտարարված քաղաքական ներումից, վերադառնում է Ռուսաստան: Այստեղ նա հիմնադրում է «Историческо-амсамգիրը, հրատարակում «Պրոլետարական գրողների ժողովածուն», հանդես գալիս համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դեմ, մերկացնում նրա հակամարդկային էությունը:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմին նախորդող տարիներին Ռուսաստանում աճող հեղափոխական նոր վերելքի շրջանում Մ. Գորկին գրում է «Իտալական հեքիաթները» (1911—1913 թթ.), որոնց մեջ

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 268.

պատկերում է բանվոր դասակարգի շուրջը աշխատավոր լայն մասսաների համախմբման երևույթը, գովերգում աշխատանքը, ստեղծագործ ժողովրդին: Այդ հեքիաթներից շատերը տպագրվեցին բալշևիկյան «Հվեդդայում» և «Պրավդայում» ու արժանացան լենինի բարձր գնահատականին:

Հոկտեմբերյան հեղափոխությանը նախորդող այդ նույն տարիներին Գորկին ստեղծեց «Մանկություն» (1912—1913 թթ.), «Ծառայության մեջ» (1914 թ.) ինքնակենսագրական երկերը, որտեղ Ալյոշա Պեշկովի կյանքի օրինակով նկարագրեց Ռուսաստանի դաժան սոցիալապես հարած պատանու կյանքի ողջ ծանրությունը և կերտեց դեպի լույսն ու դիտությունը, աղատ կյանքը ձրգտող հերոսների անմոռանալի կերպարներ:

Քաղքենիական միջավայրի վաղրելիությունը, բութ ու բռնակալ իրականության ամբողջ մերկությունը պատկերված են Գորկու այս և 1923 թ. գրած «Իմ համալսարանները» ինքնակենսագրական վեպում: Ինքնակենսագրական այս երեք վեպերը սոցիալիստական ռեալիզմի անդրանիկ լավագույն գործերից են, որոնցում հասարակական վերափոխումների, սոցիալ-քաղաքական աղատագրման տենչը հերոսին բերում է հեղափոխական սոցիալիստական հանապարհ:

* * *

Ստեղծագործական կյանքի վաղ շրջանից Մ. Գորկին մեծ ուշադրություն է դարձնում ցարական Ռուսաստանում ապրող ազգերի գրականություններին, հետաքրքրվում նրանց մշակույթով, բարեկամական կապեր հաստատում շատ ժողովուրդների գրականության ու արվեստի ներկայացուցիչների հետ:

Լինելով իսկական, սլոուենադարձական ինտերնացիոնալիզմի ջատագույն, Գորկին հատուկ ուշադրություն էր դարձնում այդ ազգերի բարեկամության, փոխադարձ հարգանքի, միմյանց մոտիկից ճանաչելու հարցերին: Գրողի այդ ձգտումը հատկապես ուժեղացավ 1900-ական թթ., երբ ցարական կառավարությունը մասսաներին հեղափոխական սոցիալիստիկ հեռու պահելու նպատակով հրահրում էր ազգային թշնամանք, կաղմակերպում ազգամիջյան կոտորածներ: Բր հողվածներից մեկում, խոսելով ցարական Ռուսաստանի ժողովուրդների գրականության ու արվեստի մասին, նա գրում էր. «...թաթարները, մերձվողյան ֆիննական ցեղերը, մերձկասսյան տափաստանների թուրք-ֆիննական և բոլոր մյուս մարդիկ, որոնց հետ մենք ապրում ենք դարեր, մնացել են հին գրականության տեսագաղտից միանգամայն դուրս, նույնիսկ հին կուլտուրայի մարդկանց — հրեաներին, վրացիներին, հայերին — գրականությունն ընդհանրապես վերաբերվել է համարյա այնպես բթորեն ու տգիտորեն, ինչպես Եվրոպայի գրականագետները վերաբերվել են ու վերաբերվում են մեզ, ռուսներին»: Գորկին հատկապես բարեկամական սերտ կապերի մեջ էր Անդրկովկասի ժողովուրդների հետ: Դեռևս 1891 թ. նա Թիֆլիսում մերձենում է հայ, վրացի, ադրբեջանցի գրական շատ գործիչների հետ ու այդ բարեկամությունը պահպանում մինչև իր կյանքի վերջը: Հայտնի է, որ նա մոտիկ կապերի մեջ է եղել «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու, թարգմանիչ Ն. Կարա-Մուրզայի և ուրիշների հետ:

Հայ իրականության մեջ Գորկու նկատմամբ հետաքրքրությունը երևան եկավ դեռևս 900-ական թթ. սկզբներին: Այդ ժամանակվանից հայ մամուլում բաղմաթիվ հողվածներ են տպագրվում, որոնցում հատկապես նշվում էր մեծ

գրողի հումանիզմը, նրա գրական վարպետությունը, նրա ստեղծագործությունների թեմաների թարմությունը: «Մշակում», «Տարադում», «Լուսավում» և այլ թերթերում ու ամսագրերում հայ գրականության ներկայացուցիչները խոսում էին տաղանդավոր գրողի արժանիքների մասին, պարբերաբար թարգմանություններ տպագրում նրա ստեղծագործություններից:

Գորկու գրական վաստակը առանձնապես բարձր գնահատականի արժանացավ հայ բուլշևիկյան մամուլի կողմից:

Կոմունիստական կուսակցության ականավոր գործիչներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Մուսվյանը և ուրիշներ նախահեղափոխական հայ բուլշևիկյան մամուլի էջերում բազմիցս անգրագարձել են Գորկու ստեղծագործություններին, պաշտպանել պրոլետարական գրողի առաջադրած գրական-քաղաքական սկզբունքները, բարձր գնահատել նրա գեղարվեստական ստեղծագործությունը: Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը հայ իրականության մեջ բուլշևիկյան դիրքերից զլխավորում էին Գորկու շուրջը ծավալված պայքարը: Ստ. Շահումյանը ոչ միայն իր հոդվածներում պաշտպանում էր Գորկուն ու նրա ստեղծագործությունը, այլև առաջինն էր, որ առանձին գրքով թարգմանեց ու հրատարակեց գրողի «Մեկ անգամ աշնանը» պատմվածքը: 1907 թ. Լոնդոնում կուսակցության V համագումարում Շահումյանը հանդիպում է Գորկու հետ: Իր խմբագրությամբ հրատարակվող «Современная жизнь» շաբաթաթերթում Շահումյանը առանձին հոդվածով հանդես է գալիս Մ. Գորկու մասին: Նա պայքարում է գրողի ստեղծագործությունների ոգին ու նպատակադրումը ազատագրողների դեմ, ցույց տալիս, որ Գորկին պրոլետարական մասսաների իսկական երգիչն է: «Մաքսիմ Գորկին ոուս բանվորների սիրելին է,— գրում է Շահումյանը:— Եվ դա միանգամայն հասկանալի է. դուրս գալով ժողովրդական «ստորին» խավերից, ինքնուս գրող, նա իր մեջ վարդաքերել է գեղարվեստական մեծ տաղանդ: Սպա հասնելով գրական փառքի բարձունքներին, դառնալով պաշտոնական ընթերցող հասարակության կուռքը, նա իր բնական վարդաքման ընթացքով եկավ բանվորների մոտ, որոնց նա բերեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի գրողակի տակ, դարձավ նրանց երգիչն ու կենցաղագիրը: Նույն հոդվածի վերջում Շահումյանը գրում է. «Գորկին պրոլետարական գրականության վարդն ու սարձանքն է»³:

Խուսափանում ցարական իշխանությունների կողմից նացիոնալիստական հակամարտությունների բորբոքման օրերին և հայ ժողովրդի ճակատագրի ամենածանր պահին Մ. Գորկին հղանում է հայ գրականության ժողովածու լույս ընծայելու միտքը:

1916 թ. «Нарыс» հրատարակչությունը լույս է ընծայում Մ. Գորկու անձնական մասնակցությամբ ու խմբագրությամբ կազմված «Հայ գրականության ժողովածուն», որտեղ ընդգրկված էին Պատկանյանի, Շահապիգի, Սունդուկյանի, Բաֆու, Շիրվանզադեի, Հովհաննիսյանի, Սատուրյանի, Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Դեմիրճյանի և ուրիշների գործերը: Ժողովածուն կազմելու գործում Գորկուն մեծ օգնություն է ցույց տվել բանաստեղծ Վահան Տերյանը: Հատուկ սիրով ու մեծ ուշադրությամբ է վերաբերվել Մ. Գորկին Գ. Սունդուկյանի «Պեպոյին» և ինքն էլ թարգմանել է այն:

3 Տե՛ս Գ. Հովհանն. Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան, Երևան, 1951, էջ 84:

«Հայ գրականության ժողովածուի» հրատարակումը մեծագույն սիրով ընդունվեց հասարակայնության կողմից և հարգանքի ու հրախտադիտության շատ խոսքեր ասվեցին այդ գործը կազմակերպողի հասցեին:

Մինչև իր կյանքի վերջը Մ. Գորկին պահպանեց սերը ղեպի հայ ժողովուրդը, նրա դարավոր գրականությունն ու կուլտուրան, նրա ծոցից դուրս եկած անվանի մարդիկ: Իր մահից ոչ շատ առաջ Ս. Ս. Շչերբակովին գրած նամակում խոսելով հեղափոխության գործին նվիրված անձանց և նրանց հիշատակը երիտասարդ սերնդի համար հավետ պահելու անհրաժեշտության մասին, մասնավորապես հայ ժողովրդի մատուցած ծառայությունների մասին, նա գրում էր, որ հարկավոր է հրատարակել «ալիսիսի հայերի կենսագրությունները, ինչպես Շահումյանը, Կամոն և ուրիշները»: Գորկուն միշտ էլ հուզել ու հետաքրքրել է Կամոն, ետոն ունեցել է համարյա լեզենդար անվահերություն, ևղել է զարմանալի ճարպիկ, հաջողակ և միաժամանակ երեսայի պես պարզամիտ:

Հայ գրականության ու արվեստի շատ ներկայացուցիչների հետ Մ. Գորկու ունեցած բարեկամության մասին կարելի է երկար խոսել ու բերել բազմաթիվ օրինակներ: Հիշենք դրանցից միայն մեկը: Շիրվանդագեն 1916 թ. հունվարին, Գորկու «Մանկություն» ինքնակենսագրական վեպի առթիվ իր նամակում գրում էր.

«Իմ կարծիքով, ամբողջ գիրքը ոուս ժողովրդական կյանքի, նրա հարստահարված վիճակի սիմվոլն է: Եվ ոչ միայն ոուս ժողովրդի, այլ բոլոր ժողովուրդների ընդհանրապես:

Նկատեցեք, չէ՞ որ ես ոուս չեմ, այլ հայ, որ ծնվել ու ապրել է ոուսական կյանքից հետո, մինչդեռ Ձեր ամբողջ նկարագրածն ինձ համար նույնքան հարազատ է, որքան այն ժողովրդի կյանքը, որի ծնունդ եմ ես: Եվ, հավատացեք, նույնը Ձեզ կասի և՛ ֆրանսիացի, և՛ անգլիացի, և՛ ամեն մի գրող, որ դուրս է եկել ժողովրդի ծոցից և գիտե իր ժողովրդի կյանքը:

Հենց այս հանրամարդկայնության մեջ է Ձեր մեծ գրքի գլխավոր արժեքը: Մյուս գլխավոր արժեքը՝ հեղինակի հմայիչ անկեղծությունն է»⁴:

Հայ ժողովրդի հանդեպ ունեցած սերն էր, որ Գորկուն 1928 թ., երբ նա վերադարձավ արտասահմանից ու ձեռնարկեց իր հայտնի շրջագայությունը Սովետական Միությունում, բերում է վերածնված հայ ժողովրդի սովետական հայրենիքը:

Սովետական Հայաստան կատարած կարճատև, սակայն բուլանդակալից շրջագայությունից ստացած իր տպավորությունները Մ. Գորկին ղետեղում է «Սովետների Միությունում» ակնարկաշարում: Գորկու տեսած Սովետական Հայաստանը դեռ բուրբուրվին երիտասարդ էր, սակայն գրողի սուր աչքը կարողացավ նրա տնտեսական, կուլտուրական բուռն վերելքի վկայության հիանալի օրինակներ տեսնել, նա զգաց հայ ժողովրդի դարեր շարունակ հարատևող շինարարական, ստեղծագործական տաղանդը, որի ծաղկումը նոր թափով և իրականապես սկսվեց սովետական կարգերի օրոք: Գորկու վրա մեծ տպավորություն են թողնում Հայաստանի շքնաղ բնությունը, նրա հիանալի մարդիկ: Երբ Գորկին նրեանից վերադառնում է Թիֆլիս, «Заря Востока» թերթի աշխատակցի խնդրանքով պատմելով Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունների մասին, ասում է. «Ես ամենալավագույն տպավորություններն ստա-

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 132:

ցա Երևան ու Հայաստան կատարած ճանապարհորդություններից: Հայաստանը մեծ ապագա խոստացող երկիր է... Հայաստանի ժողովուրդը թողնում է գործունյա ժողովրդի տպավորություն, որն անկասկած գիտե, թե ինքն ինչ է անում, գիտե, թե ինչպիսի խնդիրներ են սպասում իրեն վճռելու»⁵:

1935 թ. «Academia» հրատարակչությունը նախաձեռնում է հայկական պոեզիայի հրատարակումը Գորկու խմբագրությամբ: Մահից ընդամենը երկու ամիս առաջ նա հրատարակչությանը ուղղած նամակում գրում է. «...Ինձ թվում է, որ «Հայաստանի պոեզիա» անթոլոգիան կազմված է շատ սուլիդ կերպով: Նա հնարավորություն է տալիս հասկանալու պոեզիայի աճման պատմությունը, գաղափար է տալիս այդ պոեզիայի գեղեցկության և ուժի մասին, օրիգինալության և պատկերավորության մասին...»⁶: Այնուհետև Գորկին անում է մի շարք լուրջ, արժեքավոր դիտողություններ անթոլոգիայի վերաբերյալ, որոնք հաշվի առնվեցին այն հրատարակելիս:

Արժե ատանձին, թեկուզ համառոտակի նշել Գորկու դրամատուրգիայի և հայ թատրոնի կապի մասին: Միշտ էլ գրողի պիեսները ամենալավ ընդունելություն են գտել սովետահայ թատրոնում և հանդիսատեսի կողմից: Նրա պիեսներից շատերը («Հատակում», «Եզոր Բուլիչներ և ուրիշները», «Դոստիգաևը և ուրիշները», «Վասսա Ժելեզնովա» և այլն) տարիներ շարունակ եղել են սովետահայ թատրոնի խաղացանկում, հուզել հանդիսատեսին և իրեն՝ թատրոնի կուլեկտիվին:

Գորկին սրտագին բարեկամական կապեր է ունեցել Ալ. Շիրվանզադեի, Ե. Չարենցի, Ստ. Զորյանի, Տ. Հախումյանի և ուրիշների հետ:

• • •

Գորկին 1928 թ. վերջնականապես վերադառնալով Սովետական Միության, փաստորեն գլխավորեց սովետական գրականությունը և իր հոգիվածներով, ելույթներով, խորհուրդներով, իր ստեղծագործության կենդանի օրինակով մեծ օգնություն և ծառայություն մատուցեց սովետական գրականությանը:

Գորկին գրեց «Արտամանուկների գործը» վեպը, որտեղ պատմական լայն ֆոնի վրա (վեպն ընդգրկում է 1861 թ. մինչև 1917 թ. ընկած ժամանակաշրջանը) ցույց տվեց ռուսական բուրժուազիայի երեք սերունդների պատմությունը, ինչպես նաև բանվոր դասակարգի երեք սերունդների պատմությունը: Գրողը պատկերում էր բանվորական շարժման ու սոցիալիստական գիտակցության աճը և դրա հետ կապված բուրժուական իրականության անկումը:

1925 թ. Գորկին հղանում է իր ամենախոշոր գործը՝ «Կլիմ Սամգինի կյանքը», որի վրա նա աշխատեց մինչև իր կյանքի վերջը: Սա, լուսաշարսկու խոսքերով ասած, «տասնամյակների շարժվող համայնապատկեր» է, որի մեջ ընդգրկված է ռուսական կյանքի մի ամբողջ ժամանակաշրջան: Վեպի ամենագլխավոր թեման բուրժուական գաղափարախոսության մերկացումն է, բուրժուական ինդիվիդուալիզմի, սամպինականության մերկացումը:

30-ական թթ. Գորկին շարունակում էր ծավալել դրական-կաղամակերպական, հասարակական-քաղաքական լայն գործունեություն: Նրա նախաձեռ-

⁵ Նույն տեղում, էջ 226:

⁶ Նույն տեղում, էջ 231:

նությամբ հիմնադրվում են մի շարք ամսագրեր, ստեղծվում մատենաշարեր, նա ինքը խմբագրում է բազմաթիվ ամսագրեր, գրքեր, ժողովածուներ, հանդես գալիս ֆաշիզմի դեմ, մարտնչում հանուն խաղաղության: Նրա այդ տարիների բազմաթիվ հոդվածներն ու ելույթները ամենալայն արձագանք են գտնում Սովետական Միությունում և արտասահմանում: «Եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են», «Մի՛ւմ հետ եք դուք, կուլտուրայի վարպետներ», «Պրոլետարական ատելություն», «Հումանիզմի մասին», «Երկու կուլտուրաների մասին» և այլ հոդվածներում գրողը և բոցաշունչ քաղաքացին ընդգծում էր, որ ռեակցիայի և պրոգրեսի միջև մեր օրերում մղվող ահեղ գոտեմարտում յուրաքանչյուր ազնիվ արվեստագետ ու քաղաքացի պետք է իր վճռական խոսքըն ասի հանուն պրոգրեսի, որ այդպիսի մարտում չեզոք մնալը ժամանակի ամենամեծ հանցագործություններից է:

Մեծ են Գորկու ծառայությունները սովետական գրականության կուսակցականության, գրական վարպետության, լեզվի և բազմաթիվ այլ հարցերի լուսաբանման գործում: Այդ հարցերի շուրջը Գորկու ելույթները լի էին արժեքավոր դիտողություններով և խորհուրդներով և մեծ օգնություն ցույց տվեցին սովետական գրականության ներկայացուցիչներին:

Մ. Գորկին վախճանվեց 1936 թ. հունիսի 18-ին: Նրա մահը սովետական ժողովրդի ու գրականության ամենամեծ կորուստներից էր:

Սովետական գրողները, արտասահմանյան երկրների առաջադեմ գրողները այսօր շարունակում են ընթանալ Գորկու ուղիով և հարստացնում են սոցիալիստական ուսուցիչի արվեստը:

ГЕНИАЛЬНЫЙ ПИСАТЕЛЬ И ВЕЛИКИЙ ГРАЖДАНИН

(К 100-летию со дня рождения М. Горького)

Г. М. МНАЦАКАНЯН

(Резюме)

Жизнь и литературно-общественная деятельность А. М. Горького — ярчайший пример служения делу рабочего класса, всего трудящегося человечества. Своими художественными произведениями М. Горький утверждал социалистическую литературу и ее метод, он открыл новую страницу в истории мировой литературы. Тесными узами Горький был связан с рабочим движением России. Как истинный пролетарский интернационалист, он с любовью и великим уважением относился ко всем народам. В статье особо подчеркивается связь Горького с армянским народом и его культурой. В тяжелую годину его истории Горький осуществил издание «Сборника армянской литературы», дав возможность русской общественности ознакомиться с литературными ценностями армянского народа. В статье говорится также о большом интересе к Горькому со стороны армянской дореволюционной передовой общественности.